

Հ ՈՒ Շ Ա Գ Ի Ր

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ /ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԼՂՀ/ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԻ ԵՎ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը և ԼՂՀ Մարտունու շրջանի վարչակազմը հանդես են գալիս որպես կողմեր և պարտավոր են երկկողմանի համագործակցության իրականացման ընթացքում ղեկավարվել ՀՀ և ԼՂՀ օրենսդրության պահանջներով:

Հաշվի առնելով փոխադարձ առևտրա-տնտեսական և մշակութային կապերի հետագա զարգացման ու խորացման հետաքրքրությունները նպաստավոր պայմաններ ստեղծել երկկողմանի հարաբերությունների համար:

Հաշվի առնել, որ տնտեսական և մշակութային կապերը հանդիսանում են կարևորագույն տարրեր փոխադարձ հարաբերությունների հաստատման գործում: Լիախույս ենք, որ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի և ԼՂՀ Մարտունու շրջանի վարչակազմի համագործակցությունը մեծ հնարավորություններ կնձեռնի առևտրա-տնտեսական և մշակութային բնագավառներում մեր երկու տարածաշրջանների բազմակողմանի գործակցության և զարգացման հարցերում:

ՀՈՂՎԱԾ 1

Կողմերը իրենց իրավասությունների ու լիազորությունների շրջանակներում անհրաժեշտ բոլոր միջոցները կձեռնարկեն առևտրա-տնտեսական ու մշակութային երկկողմանի կապերի զարգացման ու խորացման ուղղությամբ:

Համագործակցությունը, որը իրականացվելու է սույն հուշագրի շրջանակներում կիրականացվի ՀՀ և ԼՂՀ օրենսդրություններին համապատասխան, ինչպես նաև հենված կլինի փոխադարձ հավասարության, համագործակցության, փոխադարձ հետաքրքրությունների և բարի կամքի վրա:

ՀՈՂՎԱԾ 2

Կողմերը իրենց իրավասությունների շրջանակներում կնպաստեն և հնարավորություններ կնձեռնեն տնտեսավարող սուբյեկտների /անկախ սեփականության ձևից/ ուղղակի շփումներին և տնտեսական գործունեությանը:

ՀՈՂՎԱԾ 3

Կողմերը համաձայնվում են համագործակցել համատեղ հնարավոր ծրագրերի իրականացման ուղղությամբ: Կողմերը կնպաստեն գյուղատնտեսության, առևտրի, մանր ու միջին ձեռնարկատիրության առանձին կառույցների միջև փոխադարձ կապերի զարգացմանը:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերը համաձայնվում են համագործակցել մշակութային, կրթական և մարզական կապերի խորացման ուղղությամբ: Կազմակերպել մշակութային կազմակերպությունների, կրթական հաստատությունների, մարզական կառույցների փոխադարձ այցելություններ, ճանաչողական հանդիպումներ, պատմա-աշխարհագրական սիմպոզիումներ, առանձին համայնքների ու դպրոցների փոխադարձ կապերի ստեղծման և ամրապնդման ուղղությամբ:

ՀՈԴՎԱԾ 5

Կողմերը իրենց իրավասությունների շրջանակներում պայմաններ կստեղծեն մշակույթի բնագավառում կապերի ամրապնդման, գեղարվեստի տարածման, զբոսաշրջության կազմակերպման և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարաբերությունների ուղղությամբ:

ՀՈԴՎԱԾ 6

Կողմերը համաձայնվում են տեղեկատվությունների փոխանակման, գյուղատնտեսության և արդյունաբերության մյուս ճյուղերի ձեռքբերումների ու փորձի փոխանակման, գյուղատնտեսական մշակաբույսերի սերմերի տրամադրման /կամ փոխանակման/ հարցերում:

ՀՈԴՎԱԾ 7


Սույն հուշագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործելու է 5 տարի ժամկետով: Համաձայնագրի գործունեության ժամկետի ավարտից հետո կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարող է կնքվել նոր համաձայնագիր:

Հուշագիրը ստորագրում են՝

Ի դեմս ՀՀ Պրեզիդենտի մարզպետ
Պողոսյան/



Ի դեմս ԼՂՀ Մարտունու
շրջանի վարչակազմի ղեկավար
Կ. Կոչատրյան/



----- 11.2008թ.
ԼՂՀ Մարտունի քաղաք